Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ հասարակական կազմակերպությունը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով, «Տեղեկատվության ազատության մասին» 23.09.2003 թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի եւ 9-րդ հոդվածի պահանջներով, 2006 թվի հոկտեմբերի 21-23-ին տեղեկություն ստանալու նպատակով հարցումներով դիմել էր Շիրակի մարզի բոլոր 119 համայնքապետերին, խնդրելով իրեն տրամադրել.

1. Համայնքի 2006 թվի բյուջեի փաստաթղթի պատճենը,
2. Համայնքի ավագանու 2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2006 թվականի սեպտեմբերի 30-ը ընդունած որոշումների պատճենները:

Հարցումներ հղելուն նախորդած եւ հաջորդած 5 ամիսների ընթացքում ակումբը, ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի իրազեկման նպատակով, կազմակերպել է 6 հեռուստատեսային քննարկում եւ 20 ռադիոհաղորդում տեղական հեռարձակող լրատվամիջոցների ուղիղ եթերում, կազմակերպել եւ անցկացրել է 6 ուսուցողական սեմինար, 5 քննարկում կլոր սեղանի շուրջ, որոնց մասնակցելու են հրավիրվել տեղեկություններ տնօրինող 200-ից ավելի պաշտոնյա, այդ թվում վերոհիշյալ հարցումների հասցեատերերը:

2006 թվի դեկտեմբերի 18-ին հասարակական կազմակերպությունը երկրորդ հարցում-նամակներն է հղել նախորդ հարցմանը չպատասխանած 89 համայնքապետերին: Այդ նամակում, նույն տեղեկությունները հարցնելուց բացի, մեկնաբանվել են նրանց պարտականություններն ու նամակին կցվել է ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը:

2007 թվի հունվարի 25-ին ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ-ն որպես հացվոր դիմեց Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան, խնդրելով վերականգնել տեղեկատվության ազատության իր խախտված իրավունքը: Ակումբի հարցումներին չպատասխանած 49 համայնքների ղեկավարներից 9-ի դեմ հայց հարուցվեց ընդդեմ Շիրակի մարզի Ազատան, Շիրակ, Լուսաղբյուր, Ամասիա, Ողջի, Արդենիս, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Հոռոմ համայնքների համայնքապետարանների:

Փետրվարի 15-ից մինչեւ մարտի 12-ը, Շիրակի մարզի առաջին ատյանի Գյումրու դատարանում, Ախուրյանի եւ Արթիկի նստավայրերում ընթացած 6 դատական նիստերի արդյունքում Դատարանը կայացրեց համանման վճիռներ. **պարտադրել Ազատան, Շիրակ, Ամասիա, Ողջի, Արդենիս, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Հոռոմ համայնքների համայնքապետարաններին հայցվորին տրամադրել հարցված տեղեկությունները եւ մասնակիորեն հատուցել վերջինիս դատական ծախսերը (տարբեր դեպքերում՝ 24-30 -ական հազար դրամ, որից 4000-ական դրամը որպես պետական տուրքի ծախսի փոխհատուցում):** Լուսաղբյուր համայնքի պարագայում կողմերը հաշտություն կնքեցին, պայմանով, որ պատասխանողը կհատուցի միայն պետական տուրքի ծախսը: Պատասխանողները, բացառությամբ Ողջի եւ Ամասիա համայնքների, հարցված տեղեկությունները հայցվորին տրամադրեցին դեռ դատաքննության ընթացքում:

Ընդհանրապես, այս 9 գործերի «Ասպարեզ» ակումբի փորձառությունը ցույց տվեց, որ արդարադատության համակարգը չնչին վերապահումներով աշխատում է տեղեկատվության բացահայտման եւ հանրությանը հասցնելու օգտին: Համակարգն ավելի շատ է հարկավոր աշխատեցնել՝ բոլոր հնարավոր ուղղություններով: Այսպիսով լուրջ անհանգստություններ կարելի է պատճառել բոլոր նրանց, ովքեր, չեն կատարում ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջները եւ հանրությանը սիրահոժար չեն տրամադրում հանրային նշանակության տեղեկությունները:

Այսպիսով անցած 6 ամիսների հարցումների եւ դատական գործերի արդյունքում Ակումբն Շիրակի մարզի 119 համայնքներից ստացել է 78-ի տեղեկությունները լրիվությամբ (7-ը դատաքննության ընթացքում), 10 համայնքից՝ մասնակիորեն (հիմնականում կա բյուջեն, չկան ավագանու որոշումները), 30 համայնքից

բոլորովին արձագանք չի ստացել, իսկ 1 համայնք (Ամասիա), չնայած օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռին (22.02.2007+15 օր= 09.03.2007) պահանջված փաստաթղթերը դեռ չի տրամադրել:

Օրենքով սահմանված ժամկետում (հարցումն ստանալուց հետո 5 օրում) ակումբի հարցումներին պատասխանել են Շիրակի մարզի 119 համայնքներից միայն **Հառիճ** (գյուղապետ Ռոլանդ Նազարեթյան), **Գետափ** (գյուղապետ Մայիս Մկրտչյան), **Փանիկ** (գյուղապետ Վարդան Մակեյան) **եւ Նոր Կյանք (**գյուղապետ Արա Սուքիասյան) համայնքների գյուղապետերը:

Տեղեկությունները մասնակիորեն տրամադրած 10 համայնքներն են.

Գյումրի, չեն տրամադրել 2005 թ ավագանու որոշումները. 25.12.2006
Հարթաշեն, տրամադրել է միայն բյուջեն, ավագանու որոշումները դեռ չկան: 10.3.2007
Լեռնագյուղ, տրամադրել է միայն բյուջեն 10.3.2007, ավագանու որոշումները դեռ չկան
Կրասար, տրամադրել է միայն բյուջեն, ավագանու որոշումները դեռ չկան: 10.3.2007
Հայրենյաց, տրամադրել է միայն բյուջեն, ավագանու որոշումները դեռ չկան: 19.2.2007
Մեղրաշեն, տրամադրել է միայն բյուջեն, ավագանու որոշումները դեռ չկան: 19.2.2007
Նահապետավան, տրամադրել է միայն բյուջեն, ավագանու որոշումները դեռ չկան: 19.2.2007
Մարմաշեն, տրամադրել է միայն բյուջեն, ավագանու որոշումները դեռ չկան: 19.2.2007
Մուսայելյան (Ախուրյանի ենթաշրջանում), տրամադրել է միայն բյուջեն, ավագանու որոշումները դեռ չկան: 19.2.2007
Բանդիվան, տրամադրել է 2005-2006 ավագանու որոշումները՝ 15.3.2007, բյուջեն դեռ չկա

Առաջին 9 դատական գործերից հետո նամակներին արձագանքած համայնքներն են.

Թորոսգյուղ, տրամադրել է միայն բյուջեն 10.3.2007, ավագանու որոշումները տրամադրել է 16.3.2007
Հայկավան, 15.3.2007, տրամադրել է բոլոր հարցված նյութերը
Հովտուն, 20.3.2007, տրամադրել է բոլոր հարցված նյութերը
Հողմիկ, 27.3.2007, տրամադրել է բոլոր հարցված նյութերը
Ցողամարգ, 19.3.2007, տրամադրել է բոլոր հարցված նյութերը
Փ.Սարիար, 14.4.2007, տրամադրել է բոլոր հարցված նյութերը

Ակումբին դեռ (17.4.2007) տեղեկություններ չտրամադրած 31 համայնքներն են.

Այգաբաց, Լեռնուտ, Կառնուտ, Կրաշեն, Հովիտ, Հովունի, Մեծ Սարիար, Փոքրաշեն, Քարաբերդ, Ձիթանքով, Ջրաձոր, Հայկաձոր, Բերդաշեն, Ամասիա (Դատարանի վճիռի պահանջը դեռ չի կատարել), **Զարիշատ, Զորակերտ, Ալվար, Աղվորիկ, Թավշուտ, Աշոցք, Զույգաղբյուր, Կարմրավան, Մուսայելյան** (Աշոցքի ենթաշրջանում), **Սալուտ, Վարդաղբյուր, Արփենի, Գեղանիստ, Հովտաշեն, Սարատակ, Սպանդարյան, Լուսակերտ:**

Առաջիկայում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը դատարան է դեմելու վերոհիշյալ 30 համայնքերից հարցումներով պահանջված տեղեկությունները ստանալու համար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի անունից

Խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյան

levon@asparez.am

www.asparez.am

հեռ. 091 821 363

Պուշկինի փ., 96, Գյումրի, Հայաստան 3102